

Մանուկ Աբեղյան -150-

Նա ընկավ հսկա կաղնու նման, և ծանր լռություն տիրեց անտառում...

Դ. Դեմիրճյան

Մարտի 17-ին Հայաստանի ազգային գրադարանի դահլիճում նշվեց լեզվաբան, գրականագետ, սկադեմիկոս Մանուկ Աբեղյանի ծննդյան 150-ամյակը: Միջոցառմանը ներկա էին գրականագետներ Աելիտա Դոլուխանյանը, Վարդան Դերիկյանը, Վլադիմիր Կիրակոսյանը և Նվեր Սարգսյանը: Նրանք հանգամանալից ներկայացրեցին անվանի գիտնականի կյանքը և գործունեությունը, խոսեցին նրա թողած հարուստ գրական ժառանգության մասին: Միջոցառմանը ներկա էին նաև Մ.Աբեղյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի սաները ուսուցչուհի Կարինե Շիտիկյանի ղեկավարությամբ: Ուսուցչուհին իր ելույթում անդրադարձավ դպրոցում անցկացված միջոցառումներին՝ նվիրված անվանի գիտնականին, որը զուգորդվեց էկրանի վրա միջոցառումների վերաբերյալ լուսանկարների ցուցադրությամբ: Այնուհետև սաները կարդացին ասույթներ և հանդես եկան երգով: Ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ՝ միջոցառման ավարտին սաները հրաշալի կատարեցին „Հուսո առագաստ,, երգը:

Եվ վերջում՝ ներկա գտնվողները դիտեցին մեծ ցուցասրահում բացված գրականության ցուցադրությունը՝ նվիրված Մանուկ Աբեղյանին: